ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/70

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8878-2019 գրությամբ Ա/Ձ Նիկոլայ Զախարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի (հետայսու՝ Պատվիրատու) 23.05.2019թ. թիվ 29 գրության հիման վրա 29.05.2019թ. թիվ 26/26-1/8878-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Նիկոլայ Զախարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Նիկոլայ Զախարյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/70 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.05.2019թ. թիվ 29 գրությամբ հայտնել է, որ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի միջև 18.02.2019թ. կնքված «ՍԲԿՏ-ԳՀԱՊՁԲ 19/5-2» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ա/Ձ Նիկոլայ Զախարյանը ՊՈԱԿ-ին պարտավոր էր մատակարարել 28 չափաբաժին ապրանքներ՝ ավտոմեքենաների պահեստամասեր, սակայն Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի կողմից նշված ապրանքները չեն մատակարարվել: Պատվիրատուն բազմիցս բանավոր կերպով դիմել է մատակարարին չափաբաժինների մատակարարման պահանջով, ինչպես նաև երկու անգամ էլ. Փոստին ուղղարկված գրությամբ զգուշացրել է, որ ապրանքների չմատակարարման դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծելու մասին, բայց չափաբաժինները այդպես էլ չեն մատակարարվել:

Պատվիրատուն հաշվի առնելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը, 2019 թվականի մայիսի 23-ին միակողմանի լուծել է պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/70 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի միջև 18.02.2019թ. կնքվել է «ՍԲԿՏ-ԳՀԱՊՁԲ 19/5-2» ծածկագրով «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ավտոպահեստամասերի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ա/Ձ Նիկոլայ Զախարյանը պարտավորվել է 20 օրվա ընթացքում մինչև 20.12.2019թ. մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները:

2. Ա/Ձ Նիկոլայ Զախարյանին ուղղված 23.05.2018թ. թիվ 30 գրությամբ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի միջև 18.02.2019թ. կնքված «ՍԲԿՏ-ԳՀԱՊՁԲ 19/5-2» ծածկագրով պայմանագրի կատարման ընթացքում չի մատակարարվել պայմանագրով սահմանված ապրանքները, որի մասին բազմիցս զգուշացվել է բանավոր կերպով և երկու անգամ գրավոր՝ էլ. փոստին ուղղարկված ծանուցմամբ: Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը, Պատվիրատուն 2019 թվականի մայիսի 23-ին միակողմանի լուծել է պայմանագիրը:

5<u>. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8878-2019գրությունը, «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի 23.05.2019թ. թիվ 29 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***<u>խախտել է պայմանագրով նախատեսված</u>*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***<u>պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը</u>*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի միջև 18.02.2019թ. կնքվել է «ՍԲԿՏ-ԳՀԱՊՁԲ 19/5-2» ծածկագրով «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ավտոպահեստամասերի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ա/Ձ Նիկոլայ Զախարյանը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (հետայսու՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ Ա/Ձ Նիկոլայ Զախարյանը պարտավորվել է 20 օրվա ընթացքում մինչև 20.12.2019թ. մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները:

Ա/Ձ Նիկոլայ Զախարյանին ուղղված 23.05.2018թ. թիվ 30 գրությամբ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի միջև 18.02.2019թ. կնքված «ՍԲԿՏ-ԳՀԱՊՁԲ 19/5-2» ծածկագրով պայմանագրի կատարման ընթացքում չի մատակարարվել պայմանագրով սահմանված ապրանքները, որի մասին բազմիցս զգուշացվել է բանավոր կերպով և երկու անգամ գրավոր՝ էլ. փոստին ուղղարկված ծանուցմամբ:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը, Պատվիրատուն 2019 թվականի մայիսի 23-ին միակողմանի լուծել է պայմանագիրը:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետով և նույն կետի 2.1.7.1 ենթակետով սահմանվել է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի N 1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման ժամկետը նախատեսվել է, որ ապրանքների մատակարարումն իրականացվում է ***<u>20 օրվա ընթացքում մինչև 20.12.2019թ:</u>***

Ուսումնասիրելով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետի վերաբերյալ վերոհիշյալ դրույթը, գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման փաստը, քանի որ համաձայն Պայմանագրի՝ ապրանքների մատակարարման առավելագույն ժամկետն ըստ էության նախատեսված է եղել 20.12.2019թ., իսկ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտման փաստը, քանի որ Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետներն երկակի մեկնաբանության տեղիք են տալիս, ուստի դրանք չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ա/Ձ Նիկոլայ Զախարյանի:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ա/Ձ Նիկոլայ Զախարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բավարար հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8878-2019 գրությամբ Ա/Ձ Նիկոլայ Զախարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**